

րածություն էին զբաղվում նաև ցորենն ու զարին։ Օլասայի հայերի մեծ մասը մոռակա լեռնալանջերում սեփական խոհաբերքներ ու արտադրանքներ (մեղրեններ) ունեին, զբաղվում էին անասնապահությամբ ու կաթնամսանեսութվամբ։ Առաս ու որակյալ էր նաև այս դյուղի մեղրքը. եղակի չէին 100—150 փեթակ ունեցող բնամանրները։

Յոմուրայի շրջանի արեմուտքում Օլասան ամենահեռավոր ու վերջին քիչ թե շատ հայտնակ պլուդն էր։ Այդ դյուղից էր անցնում դեպի Զիդակաս—Վերանա—Մալա ասանոգ լեռնային արահեար, որանդից անցել են Համշենից ու Աե-դեաից դեպի Մալա, Օրդու, Ամասոն և այլուր դաղթող հայերի բաղմաթիվ քարավանները։

Օլասան Յոմուրայի շրջանում առաջին դյուղն էր, որանդ լայնորեն օդաադործում էին նահապետական արորը։ Հորը մասամբ հերկում էին նաև լեռնաբերով, իսկ ասփանելն ու ցանքսը հիմնականում՝ արորով։

1895 թ. Օլասայի դրենի բոլոր հայերի աները ամրոցողովին թալանեցին ու հրկիզեցին հարեան Միկանոյ և Մանդեներ դյուղերի հորդանները։

Միկանոյի գյուղախումբն ընկած է Օլասայից մեկ ժամ հարավ՝ Միկանոյի լեռնադնշերին։ Դրանք ինն են՝ Աշաշա-մահալասի, Միսոխոր, Զեյլան, Միկանոյ, Ցանիկա, Մեսարիա, Ախսեռա, Հեյլաշի, հումարա՝ ընդամենը շուրջ 700 առանձնակցությամբ Միկանոյ դյուղի միջով անցնում է համանուն դեար, որը, սկիզբ առնելով Չադրիլի սարերից, Օլասա դյուղի մոտ միանում է Գալիանի դեարին ու թափվում Տեղերմեն-աներեն՝ Եսիր-օղլից քիչ վերև։ Ըստ ավանդության, հնում Միկանոյում միայն հայեր ու հույներ են ապրել։ XVIII դ. սկզբներին Ղուտուֆ-օղլու ենիչերական հրոսակները յաթաղանի սպառնալիքի առկա ստիպել են հայերին ու հույներին ընդունելու մահմեդական դավանանքը։ Հայերի մեծամասնությունը թողնելով հայրենի օջախը, հեռացել է, իսկ փոքրամասնությունն ընդունելով մահմեդական կրոնը, մնացել իրենց դյուղերում։ Հավասարափոխ հայերից շատերի հանրորդները մինչև մեր օրերը (նախանդեռյան ասրիներ) պահպանել էին իրենց հայկական անվանումները՝ հայիկ-օղլի,

Յատիկ-օղլի, հաշերես-օղլի, Վարդերես-օղլի, Գալուտ-օղլի և այլն։

Այսպիսով, կարելի է ասել, որ XIX դ. վերջերին Տրապիզոնի դավառի (ռացի Օրդու դավառակից) ամենահամախմբված ու կազմակերպված հայկական բնակավայրերը Յոմուրայի վիճակի դյուղերն էին, որոնցից հաակապես աչքի էին ընկնում Շանան, Կյուշանան, Մինկիլան իրենց հարակից դյուղերով։

Նույն թվականներին այդ շրջանի հայ բնակչության կաաարյալ մեծամասնությունը սեփական հողամասերի անբ դառնալով, իրավունք ու հնարավորություն սաացավ քարակերտ աներ կառուցելու, անանսություն հիմնելու, դյուղատնանսսությամբ զբաղվելու։

Մեր դարի սկզբներին Յոմուրայի վիճակի հայկական դյուղերի բոլոր ուսումնարաններն ու եկեղեցիները կրթալուսավորական ու հայապահպան մեծ դործ էին կաաարում։

Տղաներին հավասար պարաադիր էր դարձել աղջիկների զրազիտությունը։ Այդ վեհ դործի առաջին խթանողներից ու նախաձեռնողներից մեկը 1864—1872թթ. Սարալյար դյուղի դասաաու, հեաադալում երեկի բանասեր Ա. Հայկունին է եղել։

1895 թ. մղձավանջային օրերին Յոմուրայի արեմկյան կողմի հայկական դյուղերը (Կալաֆկա-Ապիոն դյուղախումբ) չնչին զոհեր ու վնասներ ունեցան, իսկ Շանայի դյուղախումբը (Կյուշանա, Մինկիլա, Սարալյար) բոլորովին անվնաս մնաց շնորհիվ կազմակերպված դիմադրության և թուրք հեղինակավոր անձնավորությունների հաաաաաաապան քաղաքականության։

Նյութական մեծ վնաս ու զոհեր ունեցան Յոմուրայի վիճակի արեմայան հայկական դյուղերը (Ակաֆիա, Մինասլի, Կրոմիլա, Զեֆանոդ)։

1860-ական թվականներից սկսած արաաաաաաա Յոմուրայից դեպի Բուաաաաաաա աաաաաա մեծ թափ սաացավ հաակապես 1895 թ. դեպքերից հաաու։

6. ՏՐԱՊԻԶՈՆ ՔԱՂԱՔԸ ԵՎ ՄԵՐՁԱՆԱ ՀԱՄԵՆԱԶԱՆՈՒՄԸ

Տրապիզոն քաղաքը։ Եվսերիոս պաամադրի վկայությամբ, Տրապիզոն քաղաքը հիմնվել է Միսոպից դաղթած հույների կողմից մ. թ. ա. 756 թ., Հոռմից՝ 300, իսկ Կ. Պոլսից շուրջ 100 աարի առաջ։ Տրապիզոնի հիմնադիրները նախ հասաաաաաա վել են Աթինա քաղաքի մոտ, սկսել շինարարությունը, սակայն անդի աննպասա դիրքի պաաաաաա

ումվ անդափոխվել են նոր վայր ու հիմնադրել Տրապիզոն քաղաքը։ Նախկին վայրը այդպես էլ կոչվում է՝ Էսկի-Տրապիզոն (Հին-Տրապիզոն)²⁴, «Տրապիզոն» անունն աաաաաաա է հին քաղաքի անդանքի սեղանաձև դիրքի պաաաաաաա հունաաաաա

²⁴ Մ. Բոժկյան, Պատմութիւն Պոնտոսի որ է Սեւա ծով, Վենետիկ (Ս. Ղաղար), 1819, էջ 61—71։

րեն տրապեզ (սեղան) րառից, Քաղաքը պաշապանված է, նախ, ընական ամբուստներով։ Հարավից շուրջ 200 մետր բարձրությամբ դեղաանիլ Բող-թեփե ապառաժն է, որի դադաթին կա ընդարձակ հարթավայր։ Արեւելքից պաշապանված է Տեղերմեն-աներե դեռով, արեւմուտքից՝ Զադրոս գետով, հյուսիսից՝ Ան ծովով։ Հնադուրն ժամանակներից այն ամրացված է եղել բերդապարիսպներով, որոնց ավերակները մնացել էին մինչև մեր օրերը։ Բող-թեփե ապառաժի լանջին կա հինավուրց վիմափոր հունական ուխտավայր, ուր րարձրանում էին ապառաժի սաորոտից մինչև վանքը փորված քարե 350 աստիճանով։

Քաղաքում առանձնացված հայկական թաղեր քիչ կային։ Շատ թաղերում հայկական աները խառն էին հունականների հետ՝ մեծ մասամբ

Ընդարձակ, րարձր պարսպապաշտ հայկական գերեզմանոցը ղանվում էր քաղաքի արեւելյան կողմում՝ վանքի ճանապարհին (Աղ. IV, նկ. 2)։ Այդ հողամասը արապիղոնցիների րարերար, հայորդի Սահփանոս Շեմսեղղինի (Արեւելցու) նվերն էր։ Բացի վանքի ու գերեզմանոցի հողերից, Ս. Շեմսեղղինը քաղաքի կենտրոնում մեծ հողամաս էր զնել ու նվիրել հայերին։ Այդ հողերում կառուցվել էր շուրջ 40 խանութ ու այլ շենքեր։ Աղալին կալվածքների ամբողջ հասույթը աարեկան 1000 ոսկու էր հասնում։ այդ դումարով ոչ միայն աղալին մարմինների ըլըր ծախսերն էին հողում, այլև մեծ հաակացումներ էին արվում դպրոցներին ու կրթական հիմնարկներին։

Տրապիղոնի քաղաքարնակ հայերի ղալի մասն իրեն համարում էր անեցիների սերունդ։



5. Տրապիղոնի զավառի ուսուցչական համադումարի մասնակիցները (1914 թ.):

շրջապառված թուրքերով։ Իրար մոա ու րավականին համախմբված հայկական թաղեր էին Իսկենդեր-փաշա (Աու-յուլի), Ենի-մահլա, Յրենդ-մահալեսի, Ենի-թուրքա, Բավականին հայեր րրնակվում էին Ուզուն-սուքաք, Քուչուք-մեյդան (Կյավուր-մեյդանի), Հաջի-դասիմ, Զեյթունլուդ, Արեֆիլ-պուլի թաղերում՝ մեծ մասամբ հույների հեա խառը։ Կային նաև քաղաքի այլ փողոցներում ցրված ու փոքր խմբերով համախմբված հայարնակ աներ։

Դրանում նրանք մասամբ իրավացի էին, քանի որ անեցիների ղանդվածային դաղթերից հեառ (XI—XII դդ.) Տրապիղոնում հասառաված հայ ընակչության մեծամասնությունն արդեն անեցի էր։ Թավրիղ—Տրապիղոն առետրակարավանային հայանի ճանապարհը խթանել էր նաե պարսկահայ (աճեմաճալ) դաղթօջախի սահղմանը, որի անվանի ներկայացուցիչներից մեկն էր Սահփանոս Շեմսեղղին—Արեւելցին։

Եթե ընդունելու լինենք, որ մինչ թուրքերի

կողմից Տրապիղոնի գրավելը (1461 թ.) անդի հայ բնակչությունը հիմնականում անեցի էր, ապա ի՞նչը կարող էր խթան հանգիստնալ տրապիղոնահայերի ինքնուրույն, նոր բարբառի ստեղծմանը, բարրառ, որն ղգալիորեն տարբերվում է ինչպես համշենահայերի, այնպես էլ անեցիների և, առհասարակ, Շիրակի բարրառից: Թվում է, որ տրապիղոնահայ բարբառն առաջացել է ինչպես հնագույն ժամանակներից այսանդ հաստատված հայություն, այնպես էլ հետագայում համշենահայերի, անի-շիրակացիների, պարսկահայերի և այլ վայ-

տո, անեցիների գաղթը գեպի Տրապիղոն գազարում է: Դրանից հետո ու հատկապես XIX դ. ընթացքում ու մեր գարի սկզբներին քաղաքի հայ բնակչության թիվն ավելանում է Տրապիղոնի մոտակա Կյումուշխանե, Բարերգ, Երպնկա, Շապին-Գարահիսար, էրզրում, նույնիսկ Վան ու այլ քաղաքներից և գլխավորապես շրջակա գյուղերից տեղափոխված բնտանիքների հաշվին:

Շրջակա համշենահայ գյուղերից Տրապիղոն անդափովածների թիվը տարեցտարի աճում էր, որն հանգեցրեց այն րանին, որ անդի հայ



6. Տրապիղոնի Մահակ-Մեսրոպյան վարժարանի վերջին շրջանավարտներն իրենց ուսուցիչների հետ (1913—1914 թթ.):

րեքից Տրապիղոն գաղթած հայություն ըրբառների միահյուսումից:

Ինչ վերաբերում է համշենահայերին, որոնք իրենց հայրենի վայրերից՝ բուն Համշենից գաղթել էին շուրջ երեք դար առաջ, գրեթե միշտ հիմնականում գյուղական վայրերում համախմբված զանգվածներով բնակվելով, պահպանել ու պահպանում են իրենց բնորոշ, ինքնուրույն բարբառը, ինչպես այժմ Արխաղիայում ու Կրասնոգարի երկրամասում:

Թուրքերի կողմից Պոնտոսը գրավելուց հե-

րնակչության գերակշռող հատվածը գարձավ համշենահայությունը:

Տրապիղոնի քաղաքամերձ բնակավայրերի թվում նշված են այն գյուղերը, որոնցում ապրում էին թեկուզ փոքր թվով հայեր: Այգ գյուղերն էին՝ Արդալիա, Մելեթրիա (վանքապական հողեր), Պարլան, Զուքուրլար, Տիվրանող, Թոծ, Մունգա, Անիֆա, Տելի-բալթա, Կրոպի, Սիսեռա, Մահմադ են: Բացի այս գյուղերից, որոնք վարչականորեն ենթարկվում էին քաղաքին, նպասակահարմար է նշել նաև Ցոմուրայի

վիճակին ենթակա Զիլդակա, Նոխաժանա ու Վերանա հայկական դյուղերը, քանդի դրանք աշխարհագրական անդադրությունը ու աղղային ներքին կյանքով քաղաքամերձ դյուղերի անխղճի մասն էին կաղմում: Քաղաքամերձ այդ դյուղերը գտնվում են Տրապիզոն քաղաքի հարավ-տրևմայան մասում, Տեղերմեն-անրե դեաի արևմրտյան ափերից բարձրացող լեռնալանջերում ու սարահարթերում և արեմտյան կողմից սահմանակից են Ագչեապաաի (Պլաաանա) վիճակին, հարավից՝ Գարա-օրմանի լեռնաշղթային:

Քանի որ քաղաքի ընակությունը գյուղատնտեսական մթերքներ (րանջարեղեն, միրզ են) մատակարարողները հիմնականում այս գյուղերն էին, նրանց գրադմունքներում գյուղատնտեսություն այդ ճյուղերը կարեոր անդ էին գրավում: Բարձր մակարդակի վրա էր գանվում նաե ծխախոտագործությունը:

Մեկերիա գյուղը գտնվում էր քաղաքի հարավում բարձրացած Բող-թեփե սարի ու հայկական գերեզմանոցից մինչև վանքապաական հողերը տարածված հողամասերում: Բնակչությունը մեծամասնությունը 1880-ական թվականներին Սև ծովի կովկասյան ափերից նահանջող թուրքական րանակի հեա փախած շերքեյներ էին, հողերի մեծ մասի տերը շերքեյների ցեղապեա Տոքսան-օղլի Հաջի Աուլեյմանն էր, որը թուրք իշխանությունից նվեր էր սաացել քաղաքամերձ այս բերրի հողաաարածությունը: Գյուղում ապրող 6 տուն հայերը (հինգը՝ Ֆասուլցոց, մեկը՝ Ճիտարցոց աղղաաոհմերից) Տոքսան-օղլու իրավադուրկ մարարաններն էին, որոնք իրենց մշակած ծխախոտի 50%-ը պաղաավոր էին հանձնել հողաաիրոջը:

1895 թ. արյունահեղ օրերին Մեկերիայի հայերին իր ապարանքում ապասաան է աալիս շերքեղ էմտուլա հֆենգին: Մեկերիայից դահվում է միայն Ֆասուլցիների պապը, որին սպանում են Տիվրանոզ գյուղից աուն վերադառնալիս:

Մեկերիային կից էին Տրապիզոնի ս. Ամենափրկիչ վաճիթը քնդառձակ կալվածեեր (Աղ. IV, նկ. 1), որտեղ ապրում էր 10 տուն հայ վարձակալ (երկուսը՝ Օաապաջցի, երեքը՝ Թորոսցի, երեքը՝ Չուաքցի ու մեկական տուն Թերպցի ու Հուանփցի ազգաաոհմերից): Վարձակալներն օգարվում էին վանքի ընակելի և օթանդակ շենքերից. վերջինները հիմնականում ծխախոտի բարեկարգ շրանոցներ էին: Այստեղի ընակչության գլխավոր գրադմունքը ծխախոտագործությունն էր:

1905—1907 թթ. վանքի սենյակներից մեկը հատկացվել էր վարժատանը, ուր երկու աարի

դասավանդեց Տրապիզոնի սղղային վտրժարանի շրջանավարտ Պեարոս Մարդարի Օաապաջյանը: Աշակերտների թվի պակասության պաաճաոով, դպրոցը գործեց միայն երկու աարի:

1895 թ. տաղնապալի օրերին այս վանքը մոտակա հայ ընակիչների անաոիկ ամրոցը պարձավ:

Վանքում ապաստանել էր Պարյան, Զեֆանող, մասամր Կրոմիա դյուղերի ու վանքի կալվածքներում ապրող շուրջ 400 հայ:

Պաղաե դյուղը Աեկերիայի ու վանքի կալվածների շարունակությունը կողմող քաղաքամերձ հայանի ամաաանոցային վայրն էր. դանվում է քաղաքից մեկ ու կես ժամ հեոու: Այսանդ ապրում էր 17 տուն թուրք, 22 աուն հայ՝ Պալցի, Պողոսցի, Նոյսեցի, Չուաքցի, Օվակիմցի աղղաաոհմերից: Մշակվող հողերի ու անաաոների մեծ մասը Մուրաթան-օղլի Զիա ըեկի ու Հաջի Դերվիշ-օղլի Մահմուդ աղայի սեփականությունն էր: Հայերից 8 աուն մարարաններ էին, իսկ մնացյալները սեփական հողամասեր ու քարաշեն աներ ունեին:

Վարելահողը մշակում էին ձեոքի գործիքներով (լեխտր, փեաաա են) ու արորներով (Աղ. VI—VII): Զրաղվում էին հիմնականում ծխախոտագործությամր և այգեգործությամր (կաղնուտ և այլ պաղաաու ծաոեր): Մշակում էին լավագույն անսակի աանձ, խնձոր, կեոաա, դեղձ, խաղող: Տները շրջապաաված էին ծվաղի մշաաղալար ծաոերով՝ ոչ միայն համեղ ու աոողաղար պաուղի, այլ նաև հողմերից աները պաշապանելու համար: Քաղաքի ու վանքի մոա լինելը մեծ աղղակ էր նաև րանջաանոցային րույսերի մշակմանը: Պարյանցիները միաժամանակ լավ անասնապահներ էին: Ամաոր կովերը քշում էին 1—2 օրվա ճանապարհ հեոու դանվող արոաավայրերը (Արրդանլի, Կըրոմ, Յափաղ): Հավարուծությունը տնտեսության անրաժան մասն էր: Կաթնատնտեսությունից և գյուղատնտեսության այլ ճյուղերից սաացված մթերքների ու բերքի պալի մասը, իսկ ծխախոտի ու կաղինի բերքը հոմարյա ամրողջովին վաճաոում էին քաղաքում, վանքում ու հովեկներին:

Բացի գյուղատնտեսությունից, աոանձին անհաաներ ղրաղվում էին շորեպանությամր (չալանգաթ), որոնք պեաական ու մասնավոր բեոներ էին տանում ներքին դավաոները՝ Բարերդ, էրպրում, Երղնկա, նուլինիսկ՝ Վան:

Վանքի մոա ապրելու շնորհիվ, պարյանցիք սեփական եկեղեցի ունենալու կարիք չեն ղղացել:

Գյուղում ուսումնարան գոյություն է ունեցել

1850—1895 թթ., 1893—1895 թթ. պարյանցիք կառուցեցին գլխորդի քարակերտ ու լուսավոր երկհարկանի շենք։ Սակայն աշակերտներին գոնե մեկ տարի չի հաջողվում սովորել նոր շենքում, 1895 թ. արյունալի օրերին առաջին շենքը, որ հրկիղում են թուրք բարբարոսները, լուսավորության օջախը՝ չպրոցես էր։ Դրանից հետո պարյանցիք այլևս գլխորդական շենք կառուցելու ձեռնամուխ չեն լինում։ 1,5—2 ժամ հեռավորության ճանապարհ անցնելով, աշակերտությունը գնում էր քաղաքի աղագլխի վարժարանը կամ հեռավոր այլ գյուղեր։

1895 թ. փորձություններ օրերին, ինչպես վերը հիշվեց, պարյանցի հայերի մեծ մասը, Կոնստան Սարգսի դեկավարությունը, ապաստանեց Տրապիզոնի մերձակա ս. Ամենափրկիչ վանքում ու փրկվեց։

Կառավարած վայրագություններից սարսափահար, պարյանցի հայերից շատերը նույնպես թողնելով հայրենի օջախը, փախան Ռուսաստան։ Իստիլոգ կամ Ձոխուր-չախուր։ Պարյանից կես ժամ հարավ-արևելք գտնվող այս գյուղում ապրում էր 5 առն հայ՝ Օսապաշյի, Առաքելի, Օվակիմի, Թոփալի, Ղաղարի աղագահներից։ Բոլորն էլ թուրք աղաների մարաբաններ։

Տիվրաճոգ գյուղը գտնվում էր Իսախոջից կես ժամ հարավ, որանդ բնակվում էր 30 առն թուրք ու 5 առն հայ՝ Կյուրեղյան, Սիմոնյան, Չուպրյան աղագահներից, որոնցից միայն Կյուրեղյանները սեփական հողամասեր ունեին։ Ամենահարուստ կալվածատերերը Զիա-բեկ, Շապար-բեկ ու Իրաֆիմ-բեկ եղբայրներն էին։

Ծանր ու զաժան էր մարաբանների ապրուստը։ Իսախոջի Օսապաշյան Հուսեփը, որն րնաանիքով երկար ապրիներ Զիա-բեկի մարաբան է եղել, պատմում է. «Բեկը սահպում էր մեզ խոպան հողերի փորել 70—75 սմ խորությունը։ Երեք հոգով քով-քովի կանգնած, կրողիս փեռաաներով (երկսայր, թոնար փեռաա) փորում, արմաններից ու քարերից մաքրում էինք մշակվելիք հողամասը, քարերով արաի եղբերին պատ էինք բարձրացնում։ Եթե զրա կարիքը չկար, սահպում էր խոր փոսեր փորել, քարերը լցնել մեջը, վրան 70—75 սմ հող թափելով, հավասարեցնել վարելահողի մակերեսին։ Եթե մի քիչ խախտում անգամ նկատեին, աշխատավարձից կզրկեին, նորից փորել կապին, հաճախ էլ մարաբային կհեռացնեին տնից, ու հողից»։ Իրավադրվի մարաբան սահպած էր լուռ ու անարարունջ կաատրել աղայի բոլոր պահանջները, այլ

կերպ նրան, րնաանիքով հանգերձ, սպառնում էր անապասան մուրացիկի կյանք։

Տիվրանաղում չափաղանց զժվար էր վառելանյութի հարցը։ Երկու-երեք ժամ հետո անառներից շալակով վառելիք (փայա) էին րերում։ Փոքր մաս էին կաղմում րեռնակիր անասուններ (էշ, ձի) ունեցողները։ Միախոտի ցողունները շորացնում ու որպես վառելանյութ էին օգտագործում։

Գյուղացիների զբաղմունքն ու հող մշակելու եղանակը ոչնչով չէր տարբերվում պարյանցիներից։

Խոճ գյուղը գտնվում էր Տրապիզոնից երկու ժամ հարավ և ուներ հարմարավետ հողամասեր։ Քաղաքից Թոճ ասնող արահեան անցնում էր Բոդ-թեփե, Պարյան, Տիվրանոյ, Զյուլմեյա²⁵ գյուղերի միջով։ Գյուղն ուներ 21 առն բնակիչ, որոնցից 5 թուրք, 16 հայ՝ ներսեսցի, Օվակիցի, Կապոնցի, Թոփալի, էմեքսուղցի, Երեմցի, Եղգարցի, Մախլիցի աղագահներից։ Թոճի հայերի մեծամասնությունը սեփական վարելահողերի տեր էր, աները ցրված էին, հիմնական զբաղմունքը ծխախոտագործությունն էր։ Քաղաքից համեմատաբար հեռու լինելու պատճառով բանջարաբուծությունը երկրորդական անդ էր զբաղվում։ Սակավ էին նաե պաղատու ծառերը։ Թանկարժեք կաղնու մշակումը նոր էր մտադ գործել։ Հողը մշակում էին արորներով ու մասամբ ձեռքի գործիքներով (լիսարով)։

Տիվրանոգի նման, այս գյուղում էլ ծանր էր վառելիքի հարցը։ Անասուններ 2—3 ժամ հետո էին գտնվում։

1895 թ. կոտորածի, սարսափների հետեանքով Ռուսաստան փախչող րնաանիքներից բացի, սակավահողությունը նույնպես սահպում էր ոմանց պանգիստության գիմելու, ուրիշներին՝ ջորեպանությունը զբաղվելու։ Զորեպանների ամենաշահավետ, րայց և վաանգավոր զբաղմունքը ծխախոտի վաճառքն էր։ Նրանք վաճառվելիք ծխախոտը ասնում էին Հայաստանի տարբեր գավառները՝ Բարերդ, Երզնկա, Կարին ու այլ վայրեր, թանկ գնով վաճառում։ Միախոտի մասնավոր վաճառքը Թուրքիայում խիստ արգելված էր, ոտաի շատ անգամ ջորեպանները գինված րնզարման էին ենթարկվում պետական հակիշների հեա։

Գյուղում գլխորդ ու եկեղեցի չկար։ Դպրոցահառակ երեխաները, անցնելով 1—1,5 ժամվա

²⁵ Զյուլմեյալու ապրում էր 30 առն թուրք ու 20 առն հայ։ Այս գյուղի հույն րարեկամների աշակերտամբ, եղբուների փրկվեցին հետագայում Հայկական ՍՍՀ ժողովրդական արտիստ Արման Կոթիկյանն ու եղբայրը։

ճանապարհ, գնում էին Տելի-բալթա դյուղի դպրոցը: Մինչև 1910 թ. այս դյուղը Մալայի քտհանա Տեր-Արսեն Սարյանի ծուխն էր: Ատվե-րախիա անտառների միջով, 3—4 ժամվա ճա-նապարհը նա անցնում էր մենակ՝ դոտու առա-նարձանակն ու դանակը խրած: Շատ անգամ մինչև գյուղի սահմանը դալիս էր ծաղտված՝ մու-լայի հադուսառով:

1895 թ. մղձավանջային դեպքերի օրերին, Թոծի հայերը ապստամբում են մոռակա լեռ-ներում: Երեկոյան թուրք հարեանները, Մարի-մանյանների մարաբա (Տրապիզոնցի Մարիման-յաններն այստեղ ունեին իրենց ամառանոցն ու կավվածքը) Մահմուդ-օղլի Գահրիմանի ղլխա-վորությամբ հայերին բաժանում են իրենց անե-րի վրա, ապաստան ապրիս ու պաշապանում այս կողմերը խուժած ջարդարարներից: Հայերի տնե-րի մեծ մասը թալանվեցին կամ հրկիպվեցին:

Մեծ եղեռնին, բացի Մկրտիչ Ներսիսյանի (Մուլա Մկրտիչ) բնաանիքից, ամբողջ գյուղը ենթարկվեց բռնագաղթի (Աղ. III, նկ. 1, 2): Մկրտիչը բնաանիքով հեռացավ լեռներն ու միա-նալով դիմադրական ուժերին, հռչակվեց իր կա-տարած սիրաճանրերով: Մեծ եղեռնից փրկվեցին ու Ռուսաստանում ապաստանեցին շուրջ 21 թո-ծեցի:

Մանդա գյուղը դանվում էր Թոծից մի ժամ հարավ-արևելք, որանդ ապրում էր 35 տուն թուրք, 18 տուն հույն և միայն 3 տուն հայ՝ բո-լորն էլ Հրեշտակյաններ: Մեծ եղեռնից աղաա-ված Հրեշտակյան Միսակի չորս որդիները փրկ-վել են շնորհիվ հարեան հույների: Նրանց մեծ եղբայրը, վասաակավոր ուսուցիչ, այժմ թոշա-կառու վարդան Հրեշտակյանն ապրում էր Կի-րովականում:

Անիֆա գյուղը դանվում է Տրապիզոնից 2,5 ժամ հեռու, որի արեելյան սահմանները հասնում էին Տեղեմեն-աբեր դեախի: Քաղաքից դուրս՝ մինչև խոշօղլան, գնում են Տրապիզոն—էրզրում խճուղով, այդանդից արահեար թեքվում էր արե-մուտք: Երկրորդ ուղին անցնում էր Բող-թեփե—Պարյան—Տիվրտնոդ—Մանդա—Իստիլոդ—Անիֆա դժով: Խոշօղլանում, խճուղուց շուրջ 150 քալ դեպի Անիֆա (արեմուտք), հողի ընդերքից ցալ-տում էր բուժիչ հանքային ջուր: Անիֆայի բնակչության մեծամասնությունը թուրք էր: Այս-առի էին ապրում շրջանի ամենահարուստ կալ-վածատերերը, որոնք իրենց պահելով լավագույն հողամասերը, դժվարամշակ դանդախները ծա-խել կամ կապալով ավել էին մարարաններին: Գյուղի շօ տուն հայերը հիմնականում ապրում էին առանձին, աղղակցական թաղերով՝ Թոփալ-

ցոց, Օտապաշցոց, Կապուցոց, Վարդանցոց, Ավետցոց, Ոսկանցոց աղղաառհմեր:

Անիֆայի ծայր արեմայան թաղը Տելի-բալ-թան էր, որի բնակիչները տորիների բնակացքում տեղ ու առանձին բնակավայր էին կազմել:

1895 թ. Անիֆայի հայերի մեծամասնությամբ աները կողոպտվում են, մի քանի առն է միայն փրկվում՝ շնորհիվ բարեկամ թուրքերի:

Տելի-բալթա (Գիժ-ապար): Շուրջ 18 տուն ունեցող ղուտ հայաբնակ այս դյուղը (նախկի-նում՝ Անիֆայի մի թաղը) դանվում էր քաղա-քից 3 ժամ հեռու: Տրապիզոնից Տելի-բալթա տա-նող ճանապարհն սկսվում էր քաղաքի արեմայան կողմից ու անցնում Քիրեղխանա, Կալմեն դյու-ղերի միջով: Գյուղի հիմնական աղղաառհմերից էին Եղղարցիք, Բաղդասարցիք, Տելիբալթացիք, Ավետցիք, Կարաքյահեցիք, Ավետցիք, Աարեցիք և այլն:

Անիֆայում ու Տելի-բալթայում ղբաղվում էին գյուղաանտեսությունն նույն ճյուղերով, ինչ Թոծ գյուղում:

Հարտկից հայ գյուղերի (Անիֆա, Թոծ) մշակութային կյանքը կենտրոնացած էր Տելի-բալթայում: Այստեղ էր դանվում քաղաշեն դրա-րոցն ու ս. Լուսավորիչ եկեղեցին (հիմնված 1855 թ.), որը պաշտոնական պրոթյուններում հիշվում է Անիֆա դյուղի անունով²⁶, Եկեղեցուց 300 քալ հեռու կար ընդարձակ ճահիճ, որի մոա կառուցված քարաշեն աղբյուրը կոչվում էր Եղ-րի-Բաղդատ-սուփ:

Տեղացիների վկայությամբ, գյուղի դպրոցը հիմնվել է 1850-ական թվերին: 1900-ական թվե-րին գյուղի ուսուցիչը խաղարամիտ ու կիսա-գրագետ մի մարդ է եղել, որը գյուղացիների սնոտիապաշտությունից օգտվելով, դրրացու-թյուն, դուշակություններ է արել, հմայիլներ գրել, իրեն «օգնություն» դիմողներից փող ու առաա մթերքներ շորթել: Ուսման դոբժն ղգալի չափով բարելավվում է նրան փոխարինող Բաղ-դասար Ավեախսյանի օրոք: Մշակութային վերել-քն սկսվում է հաակապես 1908 թվականից, Տրա-պիզոնի Աղղայի վարժարանի շրջանավարտ, եռանդուն ու աղղանվեր երիտասարդ Լևոն Չամուրճյանի՝ դպրոցի դասատու դառնալու օրից: Լեոնը ամբողջովին նվիրվում է բնակչության լու-սավորության վեհ դործին: Դասավանդումն ու ա-շակերանների դասախարակությունը կատարվում է քաղաքի վարժարանի ծրագրով ու մանկավարժա-կան հիմունքներով, վերացվում են ծեծն ու խիստ պաաիծները: Նրա ջանքերի շնորհիվ ավելանում է

²⁶ Տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 1966, № 6:

դպրոց հաճախող աղջիկներին թիվը, որը մինչև այդ եղակի երևույթ էր: Գյուղի երիտասարդության համար լեռնը դարձավ իսկական դաստիարակ: Անգրագիտների համար ձրի դասընթացներ ըաց արեց, ղրույցներ ու ասուլիսներ կազմակերպեց:

1895 թ. աղետներից տեխնիկացիք փրկվեցին շնորհիվ իրենց հայապաշտպան թուրք հարևանների: Մեծ եղեռնից վերապրած ու Ուսասան փոխադրված 13 հոգուց 9-ը դիմադրական խմբերի մասնակիցներ էին:

ԿՐԹԱՅԻ: Տրապիզոն քաղաքից 4 ժամ դեպի հարավ գտնվող այս գյուղի աները ասարածված էին Գալեյնոկ լեռան արևելյան լանջերին: Քաղաքից Կրոպի գնալու երեք ճանապարհ կար. տոռաչին ու դիւալոոր Տրապիզոնից խողովան— էրլորումի խճուղով, այնտեղից Անիֆա ու Կալեմեն գյուղերի միջով հասնում էր Կրոպի: Կրոպի տանող կարճ ճանապարհն անցնում էր Տրապիզոնի արեմուտքից՝ Զանոզա կամուրջից դեպի հարավ: Արահան անցնում էր Սովուք-սու (այստեղ կա սառն աղբյուր), Փեխիթուղ (խողկաղնուա), Գառուղ՝, Մահմադ (Քրեքոցոց-ջուրը), խնդրեղի-օղ ու Գալեյնոկ-սար կոշվող վայրերով ու գյուղերով: Գալեյնոկն այս շրջակայքի ամենարարձր սարն է: Նրա դապաթից բացվում է ղմայլեի տեսարան. հյուսիսում ծփում է լայնատարած Սև ծովը՝ կապույտ կամարով, արևելքում՝ Յոմուրաի լեռներն են, հարավում՝ Շահին-կայա (Արծվաժայտ) ապարածը, արևելքում՝ Մալայի անծայրածիր անտառածածկ սարերն ու գյուղերը: Խնդրեղի-օղից (որը Թուփալցոց թաղի բարձունքում գտնվելու պատճառով կոշվում էր նաև Թուփալցոց-օղ) մոտ 200 քայլ հարավ-արևելք, Ալթիբարմաք (Վեցմատ) եղրայրների ասան մոտ, կար ղանգվածեղ քարից կերտած սառն աղբյուր, երկու կուռիով ու փայտե վազով՝ ջրավազաններով:

Տրապիզոնից Կրոպի ասանող երրորդ ճանապարհն անցնում էր Տրապիզոն—Բող-թեփե վանք—Պարլան—Տիվրանող—Անիֆա—Կալեմեն—Կրոպի երթուղով:

Կրոպիի սահմաններն էին՝ արեմուտքում Գալեյնոկ սարը, որն այն բաժանում էր հայկական Վերանա գյուղից, արևելքում՝ Սիսեռա, հարավում՝ Նոխածանա, հյուսիսում՝ Կալեմեն²⁵ գյուղերը:

²⁵ Գալուղ գյուղի ընկերները, ձմեռը հատուկ փորված հորերում ձյուն էին կուսակում և ամառը էջերին ըտրձած տանում քաղաք վաճառելու:

²⁶ Կալեմենում ապրում էր 70 տուն թուրք, 20 տուն հույն:

Ձուտ հայկական այս գյուղն ուներ 21 աուն բնակչություն, բաղկացած Հրեշաակցի, Մավիցի, Կակոսցի, Ֆունաուքցի, Պուլուքցի, Թուլումչի, Դասպարցի, Կապուցի, Ալթիբարմաքցի և այլ աղդաաոհներից:

Քաղաքամերձ ամենաառաջին ու կաղմակերպված գյուղերից մեկը Կրոպին էր, եղեռնի նախօրյակին ուներ ըարձրագույն ու միջնակարգ կրթություն բրիաասարղ ուժեր (էջմիածնի ճեմարանավարտ Ֆնաքյան Երվանդը, Տրապիզոնի Աղգային վարժարանի սաներ Հայկ ու Ներսես Յնաքյանները, աշուղ Նեյնին կամ Մութաֆ Ակուփը²⁶, Վարդգես Մավյանը և այլք):

Բնակչության մեծամասնությունը սեփական կալվածքներ ուներ, որը նրանց հնարավորություն էր տվել կառուցելու քարաշեն ըարեղծներ և սահղծելու շատ թե քիչ հիմնավոր տրեստեսություն: Շատերն ունեին սեփական մեծ ու փոքր անառոներ: Բնակչության գլխավոր զբաղմունքը կաղնուտներն էին: Առաա բերք էին տալիս նաև պաղաաու աղիները: Այստեղ ևս հացահատիկներից ամենատարածվածը լաղուտն (եգիպտացորեն) էր: Թույլ էր ղարգացած ծխախոտահործությունը: Գյուղատնտեսության տյլ ձյուղերով (կաթնատնտեսություն, հավարուծություն, մեղվաբուծություն) զբաղվում էին ընաանիքի սննդի պահանջը բավարարելու շափով միայն:

Առողջարար լեռնային կլիմայի, եղեռնների ու մայրիների բուրումնավեա անաաուների և սառնորակ աղրյուրների շնորհիվ Կրոպին լավագույն ամառանոցներից մեկն էր: Տրապիզոնի հայ հարուսաններից ոմանք այստեղ ունեին իրենց բարեշեն ամառանոցները:

²⁷ Կրոպիում ապրող Ֆնաքյան աղգաուհմի մի սերընդին իրենց արեստի պաաաաող (ձիաապաք պաաաաող) մալք էին անվանում: Համաղյուգիները Մութաֆ Ակուփի մասին պատմում են, որ Ակուփը շափաղանց դրավիշ արտաքինու, վալուղ երիտասաղը է եղել, գուրեկան ձայնով ու հիանալի քեմենչե նվաղող: Մի անգամ հարևան թուրքերը հրավիրում են նրան հաղաաեք և առաչարկում առանձին սենյակում (կանանոցում) կանանց համար նվաղել ու երգել: Մահմեդական օրենքի կարգով, Ակուփի աղբերը կապում են, որպեսզի ոչ կանայք իրեն անանեն և ոչ էլ ինքը՝ կանանց: Ուրախության տաք դահին մի հանգուգն կին մոտենում է Ակուփի աղբերի կապը քանգում է ու աղպես շարունակում են ուրախ հանգստը: Գյուղի թուրք րեկի միտուհար աղջիկը սիրահարվում է Ակուփին: Աղգկա ծնողները առաչարկում են Ակուփին ընդունել մահմեդական կրոնը, աժուանալ իրենց աղգկա հետ ու տեղ գտնալ իրենց հաղաաուքները: Ակուփը չի համաձայնվում և վախենալով թուրքերի վրեժխնդրությունից, փախչում է Ռուսասան ու հասաաաում Սոչիում: Այստեղ նա գտնում է ըլորի կողմից հարգված ու սիրված աշուղ: Շատ անգամ մասնակցում է աստանգական աղուղների մրցումներին ու միշտ հաղթող գուրս գալիս: Նեյնին մահացավ Սոչիում 1949 թվականին:

Քարակերպ հւնումնարանն ու եկեղեցին
կանվում էին գյուղի կենտրոնում, րավական ըն-
գարձակ հարթավայրում: Ս. Ասավածածին եկե-
ղեցին հիմնվել է 1843 թ.:

1895 թվականին, հարեան թուրքերի հեա
ունեցած բարի հարարերությունների շնորհիվ,
գյուղը թալանի չենթարկվեց և գոհեր շունեցավ:
Հայերի գլխավոր պաշտպանները եղել են Մահ-
մուդ-օղլի Մեհմեդ ու Քուփի-օղլի էմեր աղա-
ները: Կրոպիում թալանվել ու հրկիզվել էին մի-
այն քաղաքի հարուսանների ամառանոցները:

Քաղաքամերձ գյուղերից միայն կրոպի ե-
րիտասարդությունը համեմատաբար կաղմակերպ-
ված ընդգրկմացավ ընդհանրական ու, լեոները
րարձրանալով, իր շուրջը համախմբեց շրջակա
գյուղերի գիմագրական ուժերին՝ փայլուն էջեր
գրելով աղաաագրական գոյամարտերում: Նղեո-
նից փրկվեց ու Ռուսաստան անցավ շուրջ 25
հոգի, որոնցից 15-ը գոյամարտերի ակաիվ մաս-
նակիցներ էին:

Սիւեոա: Կրոպիից արեելք գանվող հունա-
կան այս գյուղում բնակվում էր 5 աուն հայ՝
Մաաիցի ագագատոհմից: Մաաիլյանների սերուն-
դը հայանի երկաթագործներ ու պայաաոներ էին³⁰,
Մեծ եղեոնից փրկված հինգ Մաաիլյանները
աղաաովել էին հունյ գրացիների աջակցությամբ:

Մանմաա գյուղը գանվում է Տրապիղոնից
հարավ-արեմուաք, 4 ժամ հեոու և քաղաքին են-
թակա գյուղերից վերջինն էր: Նրան սահմանա-
կից Աղրիա գյուղը Ագչեապաաի (Պլաանա)
վարչական շրջանի մեջ էր մտնում: Մահմաաի
բնակչության մեծամասնությունը թուրք էր: 10
անից րաղկացած հայկական աոանձին թաղը
գանվում էր գյուղի վերին սարահարթում: Այս-
անեղ ապրում էին Ասլոնցիք, Ներսեսցիք, Սարե-
ցիք, Կանսուղցիք: Գյուղն աոաա էր սաոր ջրե-
րով: Վարելահողերը սե ու արգասավոր էին: Գըլ-
իավոր զրաղմունքը կաղնու ալգինների (կաղնուա)
մշակումն էր:

Մահմաաի դպրոցականները հաճախում էին
Տելի-բալթայի դպրոցը:

Ասլալիան Տրապիղոնի արեմուաքում քաղա-
քամերձ միակ հայկական գյուղն էր, քաղաքից 2

ժամ հեոու: Բնակչության մեծամասնությունը
(շուրջ 100 աուն) թուրք էր: 22՝ աուն հայեր
բնակվում էին իրար մոա, երկու թաղերում՝ Չո-
լաքցոց ու Բողաովանցոց: Վերջիններին ժողո-
վուրգը քսակոլ (կարճ թե) էր հորջորջում: Բոլոր
անանսությունները սեփական հողամասեր ունե-
ին: Հիմնականում զբաղվում էին ծխախոաա-
գործությամբ ու րանջարարութությամբ: Արանք
համրավավոր սոխ, սխաոր, լուիկ, լուիկի մանր
սերմացու ունեին (արփաջուղ), սմրուկ մշակող-
ներ ու վաճաոողներ էին: Արղալիայից Աե ծովի
կովկասյան ափերը (Աոլի, Աուլում) գաղթող
համշենահայերը ալժմ էլ հմուա րանջարաուղծ-
ներ են: Կաթնաանանսությամբ պարապողները
ամոանր անասունները տանում էին հեոավոր
սրոաավայրեր՝ Ինջեսու և Ֆիսերա:

Գյուղն ուներ սրրաաաջ քարերով կաոուցած
հոյակապ եկեղեցի, հիմնված 1843 թ., ս. Հարու-
թյուն անունով: Եկեղեցու ներսի պաաերն ու
խորանը պարգաբված էին կրոնական բնույթի յու-
ղանկարներով:

Եկեղեցու արեմայան պատին կից կաոուց-
վել էր նույնպես քարաշեն դպրոցը: Այս գյուղը
Վերանայի քահանայի ծուխն էր:

1895 թ. թուրք հարեաններն իրենց աներում
ապասաան են աալիս հայերին, որի շնորհիվ
ղոհեր չեն լինում, սակայն հիմնովին կողոպա-
վում են: Այգ գեպքերից հեաո Արղալիայից շա-
աերը փախում են և ապասաանում Ռուսաստա-
նում:

Արղալիայով վերջանում է վարչականորեն
քաղաքի հեա կապված մերձավոր հայկական
գյուղերի ու բնակավայրերի ցանկը, սակայն,
ինչպես վերն ասվել է, այս գյուղերից անբա-
ժանելի էին Յոմուրայի վիճակին ենթակա Զի-
ղակաա, Նոխածանա, Վերանա գյուղերը:

Զիղակաա (Լղակաա) գյուղը գանվում է քա-
ղաքից 4 ժամ հեոու, Գարա-օրմանի ծովահայաց
վերին լանջերին: Քաղաքից Զիղակաա աանող
միակ ու հարմարավեա ճանապարհը մինչե Եսիր-
օղլի անցնում էր էրգրումի խճուղով, ապա Նոխ-
աա³¹ գյուղի միջով (հարավ-արեմուաք) ու մի
ժամից բարձրանում Զիղակաա: Գյուղի ծայրա-
մասերի առանձին թաղերում ապրում էր 10 աուն
թուրք և 3 աուն հույն: Հայերը 42 աուն էին,
որոնցից 10-ը՝ Ռահանցի, 6-ը՝ Թորոսցի, 4-ը՝ Էքըշ-
ցի, 4-ը՝ Մանկուրսուղցի, 6-ը՝ Մալխասցի, 3-ը՝
Շիշմոնցի (Շիշմանյան), 4-ը՝ Ինջեցի (կամ Իսա-
հակցի) ու 5 աուն Թերղցի:

Ի աարբերություն համշենահայ մյուս գյու-
ղերի:

³¹ Նոխսայում բնակվում էր 15 աուն թուրք և 10 աուն
հույն:

³⁰ 1900-ական թվականներին ընաանիքով Սուլի փոխա-
ղված Մաաիլյան Միսակը շրջանում հուակված դարրին էր:
Տեղին է հիշել, որ Մաաիլյանները միաժամանակ աաամնա-
րույմներ (աաաամ քաղղեներ) էին: Տակավին սովետական
կարգերի աաաշին տարիներին շրջակա գյուղերում աաամնա-
ցավից աաաապողները դիմում էին Միսակին: Նա թողնում
էր իր պայտաոությունն ու աշաապ օգնության հաանում
աաաապողին: Հաաիանշական է, որ աաամ քաղղեու համար
նա վարձատրություն չէր վերցնում: Յժավից աաաապողնե-
րին օգնելը սեպապ (րարեգործություն) էա, աաում էր նա:

ղերի, զիզակսացիները անհրժեշտ էին իրարից 40—50 մետր հեռու, գլուղի զլխավոր փողոցի երկու կողմերում:

Զիզակսացում մարտա հայեր չկային: Բոլորն ունեին սեփական հողամասեր ու մեծ մասամբ՝ քարաշեն տներ: Համարյա բոլոր արհեստավորները քիչ թե շատ սեփական անասունների աեր էին: Գլուղն ուներ քարակերտ, բարեկարգ հինգ աղբյուր:

անխախտ մշակում էին կանեփ, որից ստացած թելից կաավեղեն, թուկ և այլ գործվածքներ էին հյուսում:

Կաղնուաներում և անամերձ հողամասերում աճեցրած պաղաաու ծառերից սաացված բերքը, րացի կաղինից, օգաագործում էին ղուտ սեփական կարիքները բավարարելու համար: Ասեփական գրաստի (ձի, էշ) սակավության պաաաոով, քաղաք մերգ աանելը ձեռնաու չէր: Ամրողջ գլու-



7. Գրիգոր Սյունիի նվագախումբը (Տրապիզոն, 1909—1911 թթ.):

Զիզակսացիների զլխավոր ու ամենահեղինակաւ մրաաբեր ղրաղմունքը կաղնուաներն էին, որոնցից սաացված բերքը համարյա ամրողջությամբ վաճաոում էին: Գլուղից 2—3 ժամ հեռու գանվող ընդարձակ արոաավայրերը (մեղրե) անասնապահության և կաթնասնտեսության լայն ղարգացման հնարավորություն էին աալիս: Ամառվա ամիսներին անասուններին այդ վայրերն էին աանում: Մեծաքանակ ոչխարի հոա ունեցողներ չկային: Յուրաքանչյուր ընտանիք միս և բուրդ սաանալու համար պահում էր 5—10 ոչխար: Զավաղանց սակավ էին այժ պահողները: Գլխավոր հացահատիկը եգիպաացորենն էր, որի հեա համաեղ մշակում էին լորի՝ հիմնականում վաճառքի համար: Զրաղվում էին հավարածությամբ ու մեղվապահությամբ: Բոլոր տնտեսություններն

ղում երեք էշ և երկու ձի կար: Տնտեսության ամբողջ բեռը փոխաղրում էին շալակով: Բացի կաղինից, որ վաճառքի էին աանում վաքծու փոխաղրական միջոցներով (շորի), քաղաք աանելիք ու ալնաեղից բերելիք ամբողջ բեռը նույնպես համարյա շալակով էին կրում:

Բոլոր կանանց համար պաավավոր ու միաժամանակ պարաագիր ղրաղմունք էր ոսալանակությանը:

Գլուղի քարաշեն շքեղ ս. Գեորգ եկեղեցին հիմնվել է 1855 թ.³²:

³² Ավանդաբար պաամում են, որ եկեղեցու շենքի կաուցմանը մասնակցել են գլուղի բոլոր աշխատունակ մարդիկ: Բացի որմնագիրների, քարաշենների աշխատավարձից, ամբողջ շինանյութը՝ գերան, տախտակ, քար և այլն, պատասաել ու ջոտաաան վայրն են խոսաղրել համալնական

Գյուղի շրջակայքում մնացել էր երկու ավերակ և մեկ գործող հինավուրց ուխտավայր։ Ավերակները մեկը գտնվում էր գյուղից մեկ ժամ վերե, վավերա լեռան կաաարին, երկրորդը՝ գյուղի հարավային ծայրամասում։ Վերջինից 400 քալլ արեելք «Այ-Պավլե» հունական ուխտավայրն էր, որի առնական օրը հունիսի 7-ն էր։ Այդ օրը հույն քահանան պաաարադ էր մաաուցում, հավաքվում էին բազմաթիվ հույն և հայ ուխտավորներ, ղոհաբորություններ կաաարում (մատաղ կառում), երգում ու պարում։ Տոնախմբությանը մասնակցում էին նաե մոաակա գյուղերի թուրք բնակիչները։

Տեղացիների վկայությամբ, Զիդակսայում դպրոցը հիմնվել է 1850-ական թվերին, քանզի

շեն շենքը կառուցվել է 1870-ական թվերին, գյուղացիների համայնական ուժերով։ Աղջիկ երեխաները դպրոց հաճախել սկսել են 1908 թ. աաակական խարուսիկ սահմանադրությունից հաաու։ Մինչ այդ, շրջապատված լինելով թուրք աղդաբնակչությամբ, սահպված էին աղջիկներին դպրոց ուղարկելուց հրաժարվել։

1895 թ. զիդուկսացի հայերը դազանային կոզոպուտի ե ավերի ենթարկվեցին։ Գյուղը թալանել են Օլասա և Նոխսա դյուղերի հրոսակները։ Հաջի-օղլի Իսեինի և Զուլաք-Ահմեդի ղեաավորությամբ 16 աուն հիմնովին հրկիղվել, մոխրակույտի էր վերածվել։ Բնակիչները փրկվել էին մոտակա անտառներում ապաստանելով։ «Սուա ներման լուրն առնելով, երր անաառներից աուն



8. Տոնական օր Տրապիզոնում։ «Թրքրոան պարս» 1908 թ.։

նրանց պապերը տառաճանաչությունն ու Ավետարան կարդալը սովորել էին այդ թվերին, դյուղի քահանայի մոա։ Նոր ուսումնարանի քարա-

ուժերով։ Որմնաքարերը պաարաստել են 1,5 ժամ հեռու դանվող Վերանա յուղի քարհանքում։ Տաշած քարերի փոխադրման օրերին դյուղը առնական տրամադրության մեջ է եղել։ Յուրաքանչյուր հավաաացյալ ձգակ է որքան կարող է շաա ու ծանր քար փոխադրել, եոանդուն մասնակցություն ունենալ աասածո աանա կառուցմանը։ Ամենածանր քարերը կշռել են շուրջ 150—120 կգ։ Սերնդե-սերունդ ցույց էին աալիս քարերը, որոնք տեղադրվել էին եկեղեցու մուտքի դաանը։ Նկեղեցու միակտուր 6 սմ հաստությամբ մաշմուրքի տախակից դուրը շինել ու դարգաքանդակել էր հեռավոր Մինասյի գյուղացի, հոշակված աաադձաղործ վարպետ Հուսեփը։ Հինդ ժամվա ճանապարհը, աաանց հանգստանալու, այդ ծանրակշիւ դուրը շալակին, դյուղ էր բերել էքշան վարդանը,—վկայում են համադյուղացիները։

վերադարձանք, աների միայն լերկ պաաերն էին մնացել. բարբարոսները չէին թողել մի հաա հավկամ հորթ, աարել էին ամբարների վերջին հաակ լաղուան ու կաղինը,—վկայում են ալանաաեսները։

Անօթեան մնացածները ժամանակավորապես բնակվում են հարեանների աներում, մարադներում։ Մոաակա Լիմլի դյուղի աոաքինի թուրքերից շաաերը ևս իրենց հայ բարեկամներին արամադրել էին բնակելի շենքեր, անկողին, սնունդ։ Այդպիսիներից հիշաաակման արժանի է Մուաօղլի Իրրահիմը, որ ոչ միայն ինքը օդնեց, այլև հորդորեց ուրիշներին՝ հեաեելու իր օրինակին։ Թալանից տուժածներին շոշափելի աշակցություն ցույց ավեցին նաև հայկական բարեդործական

րոնական հիմնարկությունները: Բնակչության ար մեծ ռարերախառնություն էր նաեւ, որ թու-
հինները չէին հասցրել վնասել դյուղի ցանք-
ը: Շնորհիվ քրտնաջտն աշխաաանքի, 1—2
ի չանցած, ավերված շինությունները նորից
սկանգնվեցին ու վերսկսվեց շատ թե քիչ աա-
կյանքն ու աշխաաանքը:

Թալանից հետո շաա ընաանիքներ իրենց
ությունը դաան ոուսական հողում (Աուխու-
Սոշի շրջաններ և այլուր):

Աեծ եղեոնից փրկվածներից չորսը միացան
ապաշապանության դիմող իմրերին, որոն-
Համբար Ռահանյանը (Գալաճի) հուսկվեց
խիղախ ու ձեռնհաս հայդուկային ղեկա-

Նոխածաաա գյուղը գանվում է Տրապիգոն
աքից 5 ժամ հարավ գանվող Գարա-օրմանի
ապարի մի թեր կագմող Վիվերա լեոան ծո-
այաց լանջին: Արեելքում Զիգակաա գյուղից
անված է Տիկող-րողագի կոչվող խոր ձորով
րլորով, արեմուաքում Վերանա գյուղն է,
սիսում սահմանակից է Լիմլի թուրքական
ղին, որին հաջորգում է Կրոպի հայկական
ղը: Տրապիղոնից Նոխածաաա ղնալու ճանա-
հր նույնն է, ինչ որ Մահմաա գյուղինը:
մաա գյուղից արահաար րարձրանում էր Գա-
ուկ սարը, ապա Վերանայի մոտից անցնե-
հասնում Նոխածաաա:

Գյուղը րաղկացած էր իրարից կես ժամ հե-
գանվող երկու թաղից՝ Ռահանցոց (աբեել-
ու) ու Նղարցոց. առաջին թաղի հողամաաերը
տ թեք ու քարքարոա էին, երկրորդինը՝ հա-
աաաարար հարմարավեա ու րերքաաու: Նրկու
երն էլ ապահովված էին լեռնային վճիա
ով, որոնց աւունքների մոտ կաոուցվել էին
ե կամ փայտե ավաղաններ, իսկ չուր լցնելու
մելու համար՝ փայտե Վագեր: Նղարցիների
մասը սեփական անաաոնների աեր էր և
հոգովված շինանյութերով ու վաոելիքով: Նը-
թաղը միասին 26 աուն էր, 181 անձ րնակչու-
մը, որոնցից 6-ը՝ Նղարցի, 3-ը՝ Թումանցի,
Ռահանցի, 4-ը՝ Միհասցի, 3-ը՝ Նուգարցի
եկական աուն Նթումցի ու Կուլակցի:

Այաեղ կաղինի մշակումը նոր էր մուաք
ում: Բացի կաղինից, մյուա դրաղմունք-
ն ուլյն էին, ինչ հարեան Զիղակաա գյու-
: Այաեղ ես վաա էին ապահովված գրաս-

Նոխածաաայում դպրոց հիմնվել է 1850-
ն թվականներին: Մինչև 1910 թ. դպրոցի
ը փոքր ու ողորմելի մի կաոուլց էր: Այդ
ն միացյալ ուժերով կաոուցվում է րաբե-

կարգ գպրոց՝ հիմքը (ցոքու) քարից, մնացածը՝
մաշմուրքի հղկված աաիաակից: Բուրքական
դյուղերով շրջապաաված լինելու հետեանքով,
աղջիկներին դպրոց ուղարկելը հնարավոր է եղել
միայն 1908 թ. հետո:

Նոխածաաայի ա. հաչ (ա. Հովհանես) եկե-
ղեցին հիմնվել է 1843 թ.: Ավանգության հա-
մաձայն, դյուղի առաջին րնակիչները վարելա-
հողի համար անաաոնները մաքրելիս հայանաբե-
րում են մի ավերակ եկեղեցի, որի դոան քարի
վրա հայերեն աաոերով փորագրված էր՝ Ըս.
հաչ: Ավերակը դարձնում են աղոթավայր, իսկ
չուրը՝ գերեղմանոց: Ապագայում նույն վայրում
կաոուցում են հոյակապ քարաշեն եկեղեցի. հի-
շարժան քարը աեղաղրում են նոր շենքի դոանն
ու եկեղեցին անվանում ա. հաչ:

Նոխածաաայի հայկական ավերակ եկեղեցին
ու Օլասա գյուղում մղկթի վերածված փաոավոր
հայկական եկեղեցին անհերքելի վկանեք են ա-
վելի հեոավոր անցյալում Պոնաոսում հասաաա-
ված րաղմամարդ հայկական գաղթօջախների:

1895-ի արյունահեղ օրերին Նոխածաաայի
հայերը մարդկային ու նյութական կորուսաներից
փրկվում են շնորհիվ աչալուրջ ու հեղինակավոր
թուրք հարեաններ լաղ-օղլի Քամիլի ու Բայրաք-
աար-օղլի էմինի: Մոաակա Աալգոյ գյուղի թուրք
խուժանը, քաջալերված պեաական հրամանով,
արջավում է դեպի Նոխածաաա: էմինն իր համա-
գյուղացիների հեա դիմաղրում է մոլեգնած ամ-
րոխին, սաիպում նրանց վերադաոնալ իրենց
աներն ու դարավոր հարեանների հեա բարե-
կամությունը լիղել: Հրոսակների ղեկավարները,
աեանելով էմինի վճռականությունը, սուսուիուս
հեոանում են: էմինը չորո օր իր գինակիցներով
պահպանում է գյուղը՝ փրկելով գյուղացիներին
կաոորածից ու թալանից: 1915-ին Նոխածա-
նացիք նույնպեա ամբողջությամը ենթարկվեցին
րոնագաղթի: Վերապրածներից հայանի են միայն
չորսը:

Վերաաա: Տրապիգոնի հարավ-արեմուաքում,
Գալեյճուկ լեոան արեմայան լանջերին հիմնված
այա դյուղը քաղաքամերձ դյուղերից վերջինն էր:
Նրանից արեմուաք սկսվում էր Ագչեապատի
(Պլատանա) վիճակը: Տրապիղոն քաղաքից Վերա-
նա 5 ժամվա ճանապարհը անցնում էր նույն
ուղիով, որով գնում էին Նոխածաաա: Այա երկու
գյուղերի մեջաեղում ապրում էր 15 աուն թուրք:

Գյուղի 25 աունը, աղգակցական թաղերով
իրարից 100—200 քայլ հեոավորությամը, կա-
ոուցվել էր ճանապարհի երկու կողմում: Այաեղ
ապրում էին Արրիոմցոց, էմեքսուգցոց, Գահրի-
մանցոց, Աաբեցոց, Մինալցոց, Սարգիսցոց ու

ամենտվերջում հռչակավոր շորեպան նուպտր-հա-
չանի (Դտվիթ-հաչան) կամ հաչանցոց աղպա-
տոհմերը, հաչան քեոու տունը ընտրոշ նահապե-
տական ընտանիք էր: Նրա հարկի աակ ապրում
էր 4 ամուսնացած ու 5 գեռատի տղա ե ագջիկ,
ընգամենը՝ 22 շունչ:

Վերանացիք սեփական հողամասերի աեր
էին: Գլխավոր դրաղմունքը կաղնուաներն էին:
Գյուղատնտեսության մնացած ճյուղերը համար-
յա նույնն էին, ինչ Զիգակսա գյուղում: Այսանդ
ավելի գարգացած էր անասնապահությունը,
հատկապես՝ խաշնարածությունը: Մեծաքանակ
ոչխար էին պահում Մինալցիք: 1896-ին Ռու-
սաստան փոխադրվելով, Մինալ-հաչանը մինչե
իր կյանքի վերջը ոչխարի հոա էր պահում:

Վերանացիների գարոցն ու եկեղեցին կառուց-
վել էին գյուղի կենարոնում, 600—700 քայլ իրա-
րից հեռու՝ ասփարակ վայրում:

Սերոբ Սարգսյանի վկայությամբ, գյուղի
ղպրոցը հիմնվել է 1850-ական թվերին: Նրա պա-
պը, ապագայում ա. Մաղաքիա, որը սովորել էր
Տրապիզոն քաղաքում, գյուղի առաջին գասա-
տուն է եղել: Նրկհարկանի քարակերա շենքի ա-
ռաջին հարկը՝ ձմեռվա փայտի պահեսար, անձրև
օրերին աշակերտների խաղասրահն էր: Սոաջին
առաջագեմ ուսուցիչը Սղգալին վարժարանի շըր-
ջանավարա, արապիղոնցի Միսակ Կամպուրյանն
(Թուրքոնշյան) է եղել: Կամպուրյանն, իր իսկ
վկայությամբ, մանկավարժական աշխատանքն
առաջին անգամ սկսել է այս գյուղում, ուր դա-
սավանգել է 1896—1899թ թ., կիրառելով քաղա-
քի գարոցի ուսումնական ծրագիրն ու մեթոդները:

Վերանայի շքեղ ս. Սարգիս քարակերա եկե-
ղեցին հիմնվել է 1850-ին: Մինչ այգ, հավա-
աացյալների աղոթավայրը Կուկուլ-քար սարի հի-
նտվուրց ուխտավայրն էր: Վերանայի քահանայի
իրավասությանն էին ենթարկվում նաև նոխածա-

նա ե Զիդակսա գյուղերի ծխերն իրենց եկեղեցի-
ներով:

Վերեում հիշված Կուկուլ-քար ուխտատեղին
գտնվում էր Վերանա, իլէ և Աղրիտ գյուղերի միջե
բարձրացած Կուկուլ-քար կոշվող լեռան կաաա-
րին: Դա միաձույլ, հսկայական մեծությամբ պաա-
վանգանավոր քարե սեղան էր, մակերեսը շուրջ
15—16 մետր շրջագծով: Կարծես թե հեքիաթային
աժդահանները այն կարել ու գրել էին այդ բարձր
լեռան պագաթին: Դա ընության գեղատեսիլ ու
հմայիչ մի պարպե էր, որը դասելով ռասածո հրա-
շալիքների» թվին, հավաաացյալները ուխտավայր
էին դարձրել: Սյղ քարի շնորհիվ սարն էլ կոշվել
էր Կուկուլ-սար (Կուկուլ-գաղ): Ամեն աարի օգոս-
աոսի 7-ին Վերանայի քահանան ժամասացու-
թյուն էր կատարում այգ մասուոում: Հեռավոր ու
մոաիկ վայրերից րագմաթիվ ուխտավորներ ու
ղվարճասերներ էին հավաքվում, ամբողջ օրը ղհոլ-
ղուոնայի, քյամանչու մեղեգիների ղուգակցու-
թյամբ կերուխում անում, երգում ու պարում:
Տոնախմբությանը, րացի հայերից ու հույներից,
մասնակցում էին նաև շրջակայքում ապրող
թուրք ընակիչները:

1895 թ. լեռները քաշվելու շնորհիվ վե-
րանացիները գոհեր չունեցան: Թուրք խուժանը
թալանում է րոլոր աները: Մեծ եղեռնից աղաա-
ված 12 հոգուց յոթը Դավիթ-հաչանի գլխավորու-
թյամբ քաշվել էին լեռներն ու միացել հայդու-
կային խմբերին:

Ամփոփելով վերն ասվածը, կարելի է նշել,
որ Տրապիզոնի քաղաքամերձ հայկական գյու-
ղերն ու ընակավայրերը հիմնվել էին թուրքական
գյուղերի ընակչության հեա խաոն կամ շրջա-
պաավել նրանցով: Համախմբված հայարնակ գյու-
ղերի րացակայսթյունը գգալիորեն խոշընղոաում
էր աղգալին ուրույն կյանք վարելուն և ողջամիա
ինքնապաշապանություն կաղմակերպելուն:

7. ԱԳՁԵԱՊԱՏԻ (ՊԼԱՏԱՆԱ) ՎԻՃԱԿ

Այս շրջանն անմիջական շարունակությունն
էր Տրապիզոնի քաղաքամերձ գյուղերի: Վարչա-
կան կենարոնը Պլաաանա գողարիկ քաղաքն էր:

«Պլաաանա» նշանակում է րարգենի: Ըսա
ավանգության, հին ժամանակներում հույն աե-
ղացիք պաշաում էին այգ ծառը: Տրապիզոնից
չորս ժամ արևմուաք, ծովափնյա գեղանիսա այս
քաղաքը գտնվում է լայնարձակ ու ապահով
ծովածոցի ափին: Այսանդ արղյունտհանվում է
որակյալ ձիթապաուղ ե աշխարհահռչակ ծխա-
խոա: Ագչեապաաի վիճակի վարչական կենարո-
նը (միւրուբանիսա վայրը) լինելով, շրջանը հայա-
նի էր նաև համանուն հորջորջմամբ՝ Պլաաա-

նայի միղուրուղություն (ջրջան, վիճակ): Քաղա-
քի չորս թաղում (Ուրումլուք, Իֆթիլաժա, Կոժա-
կիա, Քիլիսե-Կրանի) ընակվում էին հույներ,
հինգերորգում (Ճամե-կրանի)՝ թուրքեր: Այսաե-
ղի 12 աուն հայերն ղրաղվում էին արհեսաներով
ու առեարով ե աղգալին-մշակութային կյանքով
(ղպրոց, եկեղեցի և այլն) կապված էին Պլաաա-
նայի քաղաքամերձ Ղալինոս (Չուաքցոց-գեղ)
ընակավայրի հեա:

Այս շրջանի հայկական գյուղերը սփռված
էին իրարից լեռներով ու ձորերով անջատված եր-
կու գեաների՝ Սերայի և Սաթարեայի հովիաներում:
Սերայի հովաի ընակիչները հիմնականում ըղ-